

ԱՐՄԵՆ ԴԱԶԱՐՅԱՆ

Դ.ԴԵՄԻՐՃՅԱՆԻ «ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՍ»
ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ԶԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

1943 թվականին «Վարդանանքի» տպագրության հետ գրեթե միաժամանակ Դ.Դեմիրճյանը «Սովետական գրականություն» ամսագրում հրատարակեց «Վարդանանց պատերազմը» ուսումնասիրությունը¹: Պատմավեպին նախորդած այս հետազոտությունը Դեմիրճյանը հրապարակ էր հանում ամենևին էլ ոչ որպես առանձին գիտական երկ: Նրան ավելի հետաքրքրում էր Վարդանանց դարաշրջանի իր մեկնաբանության ուսուցողական կողմը՝ ընթերցողին (որն արդեն սկսել էր կարդալ «Վարդանանքը») կողմնորոշելու այն պատմական խնդիրներում, որոնք կապված էին Վարդանանց պատերազմի հետ: ՈՒսումնասիրությունն, ըստ երևույթին, գրվել էր այն օրերին, երբ «Վարդանանքի» առաջին հատորն արդեն ավարտված էր: Դեմիրճյանն ամփոփում էր այն հետազոտական աշխատանքի արդյունքները, որ նա կատարել էր պատմավեպը գրելուց առաջ: Պարզ երևում է, որ գրողը երկար է մտածել ու խորհել այն հարցերի շուրջ, որ զբաղեցրել են նրան տարիներ շարունակ: Ընդ որում, այն պատմական աղբյուրները, որոնցով զբաղվել է նա «Վարդանանքը» գրելուց առաջ՝ 5-րդ դարի հայ դասական պատմագրությունն է և 19-րդ դարի պատմագիտական այն հետազոտությունները, որոնք առնչվել են Արշակունյաց և Սարգսյանական Յայաստանի 4-5-րդ դարերի քաղաքական պատմության հետ:

Որո՞նք են «Վարդանանց պատերազմ» հետազոտության էական ու կարևոր ձեռքբերումները: Դ.Դեմիրճյանն առաջին անգամ փորձում էր ընդհանուր գծերով բնութագրել հայ պատմության դարավոր ընթացքի և

¹ Տե՛ս, «Սովետական գրականություն», 1943, հ. 3 և հ. 4-5:

հայկական ինքնապաշտպանական պատերազմների ու կռիվների բնույթը, որպես պետության՝ Արևելքի երկրների դեմ նրա մղած պայքարի քաղաքական հիմնադրույթ: Հայ թագավորները,- ասում է նա,- որ կռվում էին «իրենց հզոր հարևանների դեմ, ոչ ժամանակ և ոչ էլ պայմաններ են ունեցել «հասունացնելու ուժեղ պետականության գաղափարը»²: Լինելով նախարարական թույլ կապերով միմյանց ազուցված պետական մի կազմակերպություն՝ հայ թագավորական իշխանությունը դարեր շարունակ ձգտում էր կենտրոնացած ուժեղ պետականության և այդ ընթացքում ընկնում էր մեկ այս, մեկ այն հարևանի գերիշխանության տակ՝ պահպանելով երկրի կիսանկախ դրությունը: «Կիսանկախ վիճակը,- նկատում է Դեմիրճյանը,- իբրև տիպիկ ձև, իբրև հնարավոր գոյակիճակ մնաց երկար դարեր շարունակ: Հայ ժողովուրդը կառչեց իր խստաշունչ լեռնաշխարհին, և պատմական ոչ մի արհավիրք նրան չհասնեց իր երկրից»³:

Թեև հայ նախարարությունները տնտեսական և քաղաքական թույլ կապերով էին միմյանց ազուցված, թեև նրանց միջից դուրս են եկել ոչ քիչ թվով «անարժան ներկայացուցիչներ», բայց, այնուամենայնիվ, նրանց «լավագույն մասի գործունեությունը կազմում է հայ ժողովրդի գոյության և պայքարի կարմիր գիծը»⁴:

Օտարերկրյա զավթիչները հազարամյակների մեջ չկարողացան ընկճել և իսպառ ոչնչացնել հայ ժողովրդին կամ ձուլել նրան և հաստատվել նրա «տերիտորիայի վրա» շնորհիվ թագավորական իշխանության և նախարարության լավագույն մասի համառ, տևական, զրկանքներով և զոհողություններով լի պայքարի՝ հանուն այդ կիսանկախ վիճակի:

Վարդան Մամիկոնյանն, ըստ Դեմիրճյանի, հայ նախարարների ցանկում երևում է «իբրև կենտրոնական ցայտուն դեմք»: «Նրա կենսագրության թե՛ խոշոր և թե՛ մանր փաստերից երևում է,- ասում է գրողը,- որ նա միայն

² Դ. Դեմիրճյան, Երկրի ժողովածու, Երևան, 1985թ., հ. 12, էջ 289:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 299:

ռազմադաշտի քաջ գորավար չէր, այլ հեռատես, խոհուն քաղաքագետ, ինչպես նաև անձնվեր հայրենասեր»⁵:

Անդրադառնալով Վարդան Մամիկոնյանի կենսագրությանը և պատմական աղբյուրներից քաղելով այն ամենը, ինչ անհրաժեշտ էր գորավարի քաղաքական գործունեության բուն իմաստը մեկնելու համար՝ Դեմիրճյանը եզրակացնում է, որ նրա գործը՝ Հայաստանի կիսանկախ վիճակը պահպանելը, ավելի տաժանելի էր, քան «անկախ պետության պաշտպանությունը»⁶: Այստեղ կարևոր դեր էր խաղում հենց այդ փաստի հստակ գիտակցությունը: Վարդանը ժողովրդի փրկությանն էր դիմում հենց այդ «կիսանկախությունը» պահպանելու մտահոգությունից դրդված: Նա հասկանում էր, որ պարսիկների պահանջը՝ հայ ժողովրդի կիսանկախությունը ոչնչացնելու և ձուլելու պահանջ է: Այդ պատճառով, նա, որ գնահատվում ու մեծարվում էր պարսից արքունիքում, նա, որ բազմաթիվ ճակատամարտեր էր մղել Հազկերտի գորաբանակների հետ՝ ընդդեմ նրա թշնամիների, նա, որ մի ճակատամարտում փրկել էր անգամ շահի կյանքը, այժմ դիմադարձ էր կանգնում պարսից կողմնորոշումից, այրում էր բոլոր կամուրջները և փաստորեն ելնում էր հզոր Պարսկաստանի դեմ՝ պարզապես իր հայրենիքի կիսանկախ վիճակը պահպանելու, պարսկացուից փրկվելու համար և ժողովրդի հետ նահատկվելու անօրինակ սխրանքին դիմելով՝ վկայում, որ այստեղ դիմուղղման (օրինենտացիայի) հարց չկա՝ հույն, թե պարսիկ, այլ հայության ունեցած թեկուզ կիսատ-պռատ, բայց օդի պես անհրաժեշտ կիսանկախությունը պահպանելու քաղաքական հեռատեսություն: Այս միտքը Դեմիրճյանն ավելի է զարգացնում հետագա շարադրանքում, հատկապես՝ Վարդան-Վասակ դիքորոշումները քննելիս: Եվ ամենակարևորը՝ պատմական գրականության մեջ հայտնված այն կարծիքը, թե Վարդանը հունական կողմնորոշում է ունեցել, Դեմիրճյանը հեշտությամբ հերքում է, ակնառու այն փաստն ընդգծելով, որ նախ՝ հույները ճակատագրական պահին մերժեցին Վարդանին՝ նրանց ուղղված օգնության խնդրանքը, և երկրորդ՝ որ Վարդանը

⁵ Նույն տեղում, էջ 300:

⁶ Նույն տեղում:

ընդհանրապես միշտ էլ մեծարվել է պարսկական արքունիքում Պարսկաստանի կազմում հայոց զորաբանակը կռվի տանելու և անօրինակ սխրանքներ գործելու համար: Այստեղ, ուրեմն, քաղաքական դիմուղման հարցը Վարդանի ապստամբական ծրագրերի մեջ վճռական նշանակություն ձեռք էր բերում, այլ՝ սեփական ժողովրդի և հայրենիքի ապագայի հանդեպ ունեցած մտահոգությունը, պարսիկներին հարվածելու և ժողովրդի դիմադրական ուժը երևան բերելու քաղաքագիտական հմտությունն ու հեռատեսությունը, որ կապահովեր Հայաստանի թեկուզև կիսանկախ, բայց այնուամենայնիվ ձեռնտու վիճակը: Այս էր «Վարդանանց պատերազմ» հետազոտության կարևոր արդյունքներից մեկը:

Երկրորդ խնդիրը, որ նույնքան յուրովի լուծում է գրողը, դա Վարդանանց պատերազմի բնույթի հարցն է: Արդյո՞ք պարսիկների դեմ Վարդանի ձեռնարկած ապստամբություն-պատերազմը քրիստոնյա պետության պաշտպանությունն էր՝ հանուն քրիստոնեական նորհաստատ գաղափարախոսության (չէ՞ որ քրիստոնեությունը համեմատաբար նոր էր մուտք գործել Հայաստան), թե՞ դա ազգային հնքնուրույնության պաշտպանությունն էր՝ հայության մշակույթի պաշտպանությունը ընդդեմ հեթանոսության և Պարսկաստանի ազգաջինջ քաղաքականության: Դեմիրճյանը դյուրությամբ ցույց է տալիս, որ պատերազմ-ապստամբությունը մղվում էր ոչ թե և ոչ այնքան կրոնական գաղափարախոսության նկատառումներով, այլ հայկական մշակույթը և ազգային հնքնուրույնությունը պաշտպանելու և այդպես հարատևելու նշանաբանով: Սարտիրոսագրունը այդ պատերազմում կրոնական պատմիչների հավելագրումն է իրական-պատմական դեպքերի ընթացքին: Գիշտ է, հզոր Պարսկաստանի դեմ դուրս գալու և պատերազմելու Վարդանի և Վարդանանց վճիռն ու քայլերը վկայաբանական գրականության մեջ կրոնի համար մարտիրոսագրվելու և նահատակվելու ինչ-որ երանգ ունեն իրենց մեջ, բայց իրականության և պատմության փոխհարաբերությունը Վարդանանց պատերազմում այնպիսին է, որ նահատակության խնդիրը կարող է մուծվել այնտեղ որպես գաղափարախոսական ճշգրիտ հավելում և դիրքորոշում, ինչը որ ժամանակին՝ Եղիշե պատմիչի ձեռքով կատարել է կրոնական պատմագրությունը և հետագա տարիներին հաստատվել ու

վավերացվել եկեղեցու սրբավարական օրերի և պաշտոնապես ճանաչված տոնակատարությունների մեջ: Պատմական ճշգրտության համար Դեմիրճյանը չէր կարող զանց առնել այս հանգամանքը և «Վարդանանց պատերազմը» հետազոտության մեջ տալիս է դրա նուրբ և շատ կողմերով գիտական և իմաստուն բացատրությունը: Հետագայում, «Վարդանանքը» վերամշակելիս, բավական ետին պլան մղեց գաղափարախոսական այն շղարշը, որ նետված էր Վարդանանց պատերազմի վրա ոչ միայն պաշտոնական պատմագրության կողմից, այլև՝ իրականում, պատմական այն հեռավոր ժամանակների ժողովրդական գիտակցության մեջ: Դեմիրճյանը միանգամայն ճիշտ է նկատել, «Ոչ պարսից կառավարությունը, և ոչ էլ հայ նախարարական դասը տոգորված չէին կրոնականությամբ, այնքան որ՝ այդ դարձնեին պատերազմի և արյունահեղության հիմք: Նրանք պետական խնդիրներ էին լուծում»⁷:

Եվ այս տեսակետից էլ Դեմիրճյանը առաջ է քաշում երրորդ խնդիրը, որ հետագայում ճակատագրական դարձավ «Վարդանանք» պատմավեպի պատմագեղարվեստական հյուսվածքի և հիմնական մտադրույթի համար: Դա ժողովրդի՝ Վարդանանց պատերազմում ունեցած մասնակցության և դերի խնդիրն է: «Ինչ վերաբերում է հայ ժողովրդին,- գրում է Դեմիրճյանը,- որ այս կոնֆլիկտում դեր կատարեց՝ ապա պետք է նրա շարժման մեջ որոնել ոչ թե միայն կրոնական շարժառիթը, այլ ազգային ինքնուրույնության ձգտումը, որին սպառնում էր կրակապաշտությունը: Առանց հայ ժողովրդի ընթոստացման՝ ոչ հայ հոգևորականությունը և ոչ էլ իշխանական դասը կարող էին հալոննալան պատերազմ սկսել պարսից դեմ»⁸:

Ըստ երևույթին «Վարդանանց պատերազմ» հետազոտությունը գրելիս, Դեմիրճյանը ստեղծագործական տեսակետից դեռ այնքան որոշ չէր պատկերացնում այդ խնդրի գեղարվեստական իրացման կոնկրետ ուղիները, հանգամանք, որ հետագայում խորապես անդրադարձավ պատմավեպի ռեալիզմի և պատերազմում ժողովրդի այդօրինակ մասնակցության հավանական ճշգրտության վրա: Իհարկե, «Երկիր Հայրենի» դրաման գրելիս,

⁷ Երկր տեղում, էջ 330:

⁸ Երկր տեղում, էջ 331 (ընդգծումը Դեմիրճյանինն է):

Դեմիրճյանը մի որոշ չափով մշակել էր պատմության և պատմական դեպքերի մեջ ժողովրդի մասնակցության գեղարվեստական վերարտադրության իր սկզբունքները: Դեմիրճյանը հաճախ ուղղագիծ էր դարձնում հարցը՝ մոդեռնացնելով երևույթը՝ ժողովրդի դասակարգային մասնակցության փաստը երկրի պաշտպանական խնդիրներում. թագավորին անգամ ենթակա դարձնում ժողովրդական տարերքի ուժին ու գործւթյանը: Նկատենք, որ «Վարդանանքում» այս դիրքորոշումը ավելի խորացավ՝ հասնելով անգամ նոր ժամանակների մտայնության ու պատկերացումների անսքող կիրառման 5-րդ դարի պատմական հարաբերություններն ու իրադրությունը նկարագրելիս:

Եվ չորրորդ խնդիրը, որ արժարժվում է «Վարդանանց պատերազմը» հետազոտության մեջ՝ Վարդան-Վասակ փոխհարաբերության և մասնավորապես մարզպան Վասակի 451 թվականի ապստամբության մեջ գրաված տեղի ու մասնակցության քաղաքական նշանակության հարցն է: Դեմիրճյանը «Վասակ» դրամայում մարզպանի կերպարի «ռեկզիայի» հարց չի դրել և Վասակի վերաբերմամբ պատմական ինչ-որ նոր կոնցեպցիա չի առաջադրել: Նա մնացել է նախկին, ժողովրդական տեսակետի դիրքերում, ժողովուրդ, որ դարեր շարունակ նշավակել է հայրենիքի դավաճանին: Դրամայում նրան հետքերել է դավաճանի հոգևոր-բարոյական կերպարի բացահայտումը՝ մի գիտափորձ, որ շարունակությունն էր Հովհաննես Հովհաննիսյանի դարասկզբին գրած «Այունյաց իշխանը» պոեմի հոգեբանական առաջադրությունների և կերպարի վերլուծության մեթոդի: Հովհ. Հովհաննիսյանը փորձել է մտնել դավաճանի հոգու աշխարհը, Վասակի բարոյական տվյալանքների և ինքնավերլուծության մեջ տեսնել այն մարդու մարդկայնորեն հասկանալի տառապանքը, որ դավաճանել է հայրենիքին, կարևոր այն մարդու, որի ներկայությունից և գործունեությունից կախված է հայրենիքի ճակատագիրը: Գիշտ այդպես էլ «Վասակում» Դեմիրճյանը փորձել է հոգեբանական տեսակետից ավելի մանրամասնել և ամբողջացնել դավաճանի կերպարը, որ ամեն ինչ գոհաբերում է, նույնիսկ հայրենիքը՝ սեփական փառամոլությանն ու Եսասիական կրքերին հագուրդ տալու համար:

«Վարդանանց պատերազմը» հետազոտության մեջ գրողը բուրրովին չի փոխում իր դիրքորոշումը Վասակի նկատմամբ: «Վասակի շարժումը՝

ընդհանուր գնահատականով,- նշում է Դեմիրճյանը,- հակաժողովրդական էր, վտանգավոր ավելի՛ քան որքան որ այդ կարծվում է Վարդանի մասին: Այսպիսով, Վասակի գործն ու նպատակները՝ հակառակ Վասակի սուբյեկտիվ կամքի՝ ժողովրդական չեղան: Նրա հետ համաձայն չեղավ նախարարության ճմշող մեծամասնությունը, համաձայն չեղավ հոգևորականությունը և որ գլխավորն է՝ ժողովուրդը ինքը: «Ժողովուրդը չգնաց Վասակի հետևից: Նա ընտրեց Վարդանին: Ժողովուրդը գնաց իր պատմական ուղիով, և նրա հերոսը նրան առաջնորդեց այդ գործում»⁹:

Եվ վերջապես, շատ կարևոր է «Վարդանանց պատերազմը» հետազոտության մեջ Դ.Դեմիրճյանի դիրքորոշումն ու գնահատականը 451 թվականի ապստամբության հետևանքների և պատմական նշանակության մասին: Նա այն կարծիքին էր, որ 451 թվականին պարսկական մեծ բանակի դեմ Վարդանն առաջնորդել է ժողովրդական մի զորք՝ անդիմադրելի վճռով՝ «խորտակել այդ բանակը»: «Իհարկե,- նկատում է Դեմիրճյանը,- այդ խորտակումը շատ բարդ գործ էր և գլուխ բերել այդ մի այդպիսի բանակով- դա ևս նորօրինակ աննախընթաց մի ձգտում էր: Հայրենական պատերազմներ եղել էին, բայց այնտեղ հայ ժողովուրդը հանդես է եկել թագավորների և իշխանների պետական զորքերի մեջ իբրև պաշտոնական զորք, որն զգացել է հայրենիքին սպառնացող վտանգը, և կռվել է նա իո կոռմից: Սակաւն աստեղ ժոռովուռոն էո իշխանական դասին տանում աստեղազմ»¹⁰

Վարդանանց պատերազմի սկիզբն ու ավարտը՝ պատմական ժամանակաշրջանի մեջ, այն ամենը, ինչ արեց Վարդան զորավարը՝ ժողովրդի գլուխ անցած մաքառելով պարսից դեմ, Դեմիրճյանի կարծիքով, հանգեցրին ռազմական և ոչ թե միայն բարոյական հաղթության: Այդ պատերազմում «հայերը տարան ուղղակի ռազմական հաղթություն»¹¹, քանի որ որպես քաղաքագետ և զորական Վարդանը ինչ որ ծրագրել և նախապատրաստել էր՝ կատարվեց: Վերջին հաշվով, Ավարայրի ճակատամարտից և սպարապետի զոհվելուց հետո,- նկատում է Դեմիրճյանը,- «հայերը... վերստին ձեռք բերին

⁹ Նույն տեղում, էջ 328:

¹⁰ Նույն տեղում, էջ 343-344 (ընդգծումները Դեմիրճյանին են):

¹¹ Նույն տեղում, էջ 349:

այն քաղաքական վիճակը, որ նվաճված էր Վարդանի ժամանակ. կիսանկախությունը և ազգային ինքնության ազատությունը»¹²:

Այդ տեսակետը առաջին անգամ էր շրջանառության մեջ դրվում մեր պատմագրության մեջ: «Վարդանանց պատերազմը,- գրում է Ղեմիլիյանը,- ժողովրդական ազատագրական պատերազմ էր իր բոլոր հիմնական և խարակտերիկ գծերով - այնտեղ հանդես եկավ համայն ազգի միասնությունը՝ իբրև պետականություն, իբրև համայն հայրենիքի պաշտպանություն, որի մեջ հավասարապես արյուն թափեց թե իշխանական դասը և թե ժողովուրդը»¹³:

Ինչպես տեսնում ենք՝ Ղ.Ղեմիլիյանը Վարդանանց պատերազմը բնութագրում էր որպես ժողովրդա-ազատագրական պատերազմ, ընդ որում այստեղ «ժողովուրդն էր իշխանական դասին տարել պատերազմ» և ոչ թե ինչպես նախկինում, իբրև թագավորների և իշխանների գործի մի մասը կազմող պաշտոնական զորք կռվել թշնամիների դեմ:

¹² Նույն տեղում, էջ 348:

¹³ Նույն տեղում, էջ 349: